ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/476/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 11 դեկտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի դեկտեմբերի 11-ին, քննելով Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու անդամ Հայկ Լևոնի Բարսեղյանի ընտանիքի անդամ Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/476/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեստոր տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու անդամ Հայկ Լևոնի Բարսեղյանի ընտանիքի անդամ Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից 2022 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունիսի 24-ի թիվ 01/1939/278-2024 գրությամբ Արփինե Ռաֆիկի Զաքարյանին ծանուցում է ուղարկվել 2022 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ, առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում

հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 12:00-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից ստացվել է 2024 թվականի հունիսի 29-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2024 թվականի հուլիսի 30-ին պատշաճ ծանուցված Արփինե Ռաֆիկի Զաքարյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/441/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 01/3864-2024 գրությամբ Արփինե Ռաֆիկի Զաքարյանին է ուղարկվել 2024 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը՝ 14:10-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արփինե Ռաֆիկի Զաքարյանի բացակայությամբ 2024 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը՝ 14:10-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.6 2024 թվականի դեկտեմբերի 11-ի դրությամբ Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից ներկայացվել է 2022 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը:

II.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/476/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու անդամ Հայկ Լևոնի Բարսեղյանի ընտանիքի անդամ Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի առկա գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

2.2 Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը ներկայացվել է Հայտարարագիրը:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

3.1 Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու անդամ Հայկ Լևոնի Բարսեղյանի ընտանիքի անդամ Արփինե Ռաֆիկի Զաքարյանն իր պաշտոնավարման ընթացքում «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

3.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.9 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

3.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Արփինե Ռաֆիկի Զաքարյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արփինե Ռաֆիկի Զաքարյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/476/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արփինե Ռաֆիկի Զաքարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**